Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օրաթերթ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

Արևելք

a r a v o t d a i l y

66/4162/ 11 ապրիլի 2012 շաբաթի

ISSN 1829-2224

Օրինակելի ելույթներ

Այս օրերին իշխանական եւ ընդդիմադիր ռոլիտտեխնոլոգները հուշում են իրենց պատվիրատուներին, թե ինչպիսի բոցաշունչ ճառերով է պետք ազդել ընտրողների էմոցիաների վրա, որպեսզի այդ ընտրողները տվյալ քաղաքական ուժին սիրեն եւ գնան նրա ետեւից: Բայց կուսակցությունները կարող են փող չծախսել. ես նրանց միանգամայն անվճար տրամադրում եմ իշխանամետ եւ ընդդիմադիր ելույթների մոդելային տեքստերը, որոնք նրանք կարող են օգտագործել բառացիորեն, առանց մտավոր ճիգեր գործադրելու: Առավել եւս, որ այդ ճառերը, թեթեւակի տարբերակումներով, հնչում են արդեն 17 տարի: Եվ այսպես...

Օրինակելի ընդդիմադիր ելույթ

Հանցավոր վարչախումբը ժողովրդին հասցրել է աղետալի վիճակի: Ասպատակված եւ թալանված երկրում չտեսնելով իր համար ոչ մի ապագա՝ հայ մարդը, պանդուխտի ցուպը ձեռքին, դավին՝ անտեղյակ, ցավին՝ անտարբեր, բռնել է օտար ափերի ճամփան: Եվ ինչ սպասել մի պետությունից, որը ծառայում է երկու տասնյակ ընտանիքների բարգավաճմանը՝ մնացած ժողովրդին թողնելով չքավորության մեջ՝ զրկված բոլոր իրավունքներից: Բայց ժողովրդի համբերության բաժակն արդեն լցվել է, ժողովուրդը ոտքի է կանգնել եւ բռունցքվել է, իսկ այդպիսի ուժի դեմ անզոր է որեւէ ավազակային ռեժիմ, որեւէ բռնապետություն: Հանցագործներին իշխանությունից հեռացնելուց հետո մենք, սիրելի ժողովուրդ, միասին կերտելու ենք ավելի պայծառ, ավելի հպարտ, ավելի արժանապատիվ Հայաստան:

Օրինակելի իշխանամետ ելույթ

Համաշխարհային ֆինանսական եւ տնտեսական այս խորը ճգնաժամի, պատերազմի եւ շրջափակման պայմաններում Հայաստանի կառավարությունը զերծ է պահել մեր ժողովրդին սոցիալական ցնցումներից: Գրանցվում է դանդաղ, բայց կայուն տնտեսական աճ: Այո, ժողովրդի սոցիալական վիճակը շարունակում է ծանր մնալ, սակայն մենք սկսել ենք լայնամասշտաբ բարեփոխումների ծրագիր, որի դրական արդյունքները ժողովուրդը զգալու է արդեն մոտակա տարիների ընթացքում: Այդ ծրագիրն ընդգրկելու է մեր կյանքի բոլոր բնագավառները, այդ թվում՝ տնտեսությունը: Մենք մտադիր ենք դիվերսիֆիկացնել տնտեսության ճյուղերը, անհաշտ պայքար ծավալել մենաշնորհների եւ կոռուպցիայի դեմ: Մեր ուշադրության կենտրոնում է լինելու հասարակ մարդը՝ իր առօրյա հոգսերով: Այդ՝ նախադեպը չունեցող ծրագրերն իրականացնելու համար մեզ պետք է ձեր հավատն ու վստահությունը, սիրելի ժողովուրդ, եւ միասին մենք կերտելու ենք ավելի պայծառ, ավելի հպարտ, ավելի արժանապատիվ Հայաստան:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

«Սան Փալաս»-ը գործել է ապօրինի

Երեկ իրավապահների կողմից գրոհի է ենթարկվել Կապան քաղաքի մատույցներում գործող «Սան Փալաս» խաղատունը: Այս խաղատունը բացման օրվանից ի վեր որեւէ հարկային պարտավորություն չի կատարել, քանի որ գործել է ապօրինի: Ինչպես Կապանից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, «Սան Փալաս»-ը գործում է շուրջ 2 ամիս, սակայն ֆինանսների նախարարության կողմից չունի լիցենզիա: Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ չլիցենզավորված խաղատունը պատկանում է ոմն Արթուրի, որը Կապանում հայտնի է «Աբաս» մականունով: Նա Հայաստան է տեղափոխվել Մոսկվայում բնակվող մեծահարուստ Միրիկի սպանությունից հետո, որտեղ եղել է այդ մարդու վարորդը: Ի դեպ, Միրիկը Մոսկվայում նույնպես խաղատների բիզնես է ունեցել: Ըստ որոշ լուրերի՝ այս խաղատան տանիքը Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանն է, ինչով էլ բացատրվում է այդ օբյեկտի՝ արտոնյալ պայմաններում գործելը: Մեր տեղեկություններով՝ իրավապահները բռնել են նույնիսկ այդ պահին խաղատանը գտնվող հաճախորդներին: Կապանցիները պատմեցին, որ խաղատան համար դիլեր-աղջիկներին բերել էին Ուկրաինայից:

Լուսանկարը՝ ԳԱԳԻԿ ՇԱՄՇՅԱՆԻ

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Մինչ տույժը՝ Զոլյանն ու Աշոտյանը գրավոր «երկխոսել» են

Երեկ «Առավոտի» հետ զրույցում մեկնաբանելով ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի հրամանով իր հանդեպ կիրառված կարգապահական տույժը՝ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ռեկտոր Սուրեն Զոլյանը հայտնել էր, որ ոչ միայն դատարան է դիմելու, այլեւ վարչապետին, որպեսզի նա որոշի ԿԳ նախարարի հետագա պաշտոնավարման նպատակահարմարությունը: Ի պատասխան՝ իր Facebook-յան էջում Արմեն Աշոտյանը ռեկտորի պահվածքը որակել է տարօրինակ, իսկ անհամաձայնությունը հայտնելու արտահայտչամիջոցները՝ բարեկրթության բոլոր սահմաններն անցնող: ԿԳ նախարարությունը նաեւ «Առավոտին» է տրամադրել որոշ փաստաթղթեր, ինչպես նաեւ Զոլյան-Աշոտյան նամակագրական ողջ «երկխոսությունը» «թեժ» թեմայի մասին:

Կարդացեք նաեւ՝ էջ 2:

«Քարոզարշավում հեքիաթը շատ է»

«Ես ավելորդ բաներ չեմ ասելու, ասելու եմ այն, ինչը անելու ենք: Ես էլ եմ նայում քարոզարշավը, հեքիաթը շատ է»,- Նոր Հաճընում կայացած հանդիպման ժամանակ հայտարարեց «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանը: Aravot.am-ը պարոն Ծառուկյանից հետաքրքրվեց, թե իր դիտարկումներով՝ հատկապես ո՞ր կուսակցությունն է ամենաշատ «հեքիաթը» օգտագործում իր քարոզարշավում: «Դա բոլորին է վերաբերում, իրենք (քաղաքական ուժերը- Ն. Գ.) թող ուշադիր լինեն: Դրա գնահատականը ժողովուրդը պետք է տա»,- ասաց պարոն Ծառուկյանը՝ հավելելով, որ ԲՀԿ-ն իր քարոզարշավում անգամ չի ասում, որ իրեն ձայն տան. «Ասում եմ՝ նայեք, ում կնախընտրեք՝ նրան էլ ձայն տվեք: Որեւէ մեկը նման քարոզարշավ անցկացնո՞ւմ է: Բոլորը կուրծք են ծեծում»:

Կարդացեք էջ 2:

Նախագահը՝ բնապահպանների դաշնակի՞ց

«Մենք օրենքով բացառելու ենք Երեւանի կենտրոնի որեւէ կառուցապատում, եթե այն չի պատշաճում մայրաքաղաքի ճարտարապետությանը: Այսօր ակնհայտ է, որ կա հասարակական լուրջ պահանջարկ եւ նույնիսկ պայքար այս հարցում: Այստեղ մենք դաշնակիցներ ենք: Մի քանի տարի, եւ Երեւանում վերջնականապես կհաղթանակի մայրաքաղաքի դիմագիծը պահելու առաջնահերթությունը»,- երեկ Էրեբունի համայնքում ընտրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը՝ խոստանալով, որ տնտեսական շահը այլեւս չի գերադասվելու Երեւանի դիմագծից:

Կարդացեք էջ3:

ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

Ասուլիս

Այսօր, ժամը 13-ին, «Փաստարկ» մամուլի ակումբի հյուրն է Հովհաննես Հովհաննիսյանը:

Եղանակ

Երեւան +5 +20, Ճիրակ -3 +11, Կոտայք -3 +11, Գեղարքունիք -3 +11, Լոռի 0 +19, Տավուշ +2 +21, Արագածոտն լեռներ -3 +11, Արագածոտն նախալեռն. +3 +19, Արարատ +4 +20, Արմավիր +4 +20, Վայոց Ձոր լեռներ -3 +11, Վայոց Ձոր նախալեռն. -4 +20, Սյունիքի հովիտներ +5 +23, Սյունիքի նախալեռներ +2 +17, Արցախ +4 +21

Ռեկտորը «վաստակել է» կարգապահական տույժը

Հիմնավորում է ԿԳ նախարարը

«Առավոտի» երեկվա համարում տպագրված «Կամ լավ, կամ ոչինչ» վերնագրով հրապարակման մեջ տեղեկացրել էինք, որ ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի հրամանով Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ռեկտոր Սուրեն Զոլյանի նկատմամբ կիրառվել է «խիստ նկատողություն» կարգապահական տույժ՝ առանց նախարարության թույլտվության Հայաստանից բացակայելու համար: Մեկնաբանելով այդ հրամանը՝ պարոն Զոլյանն «Առավոտին» ասել էր, թե ղեկավարվում է նախարարի մասին կամ լավ, կամ ոչինչ սկզբունքով՝ հատկապես այն դեպքում, երբ նախարարը, նրա ձեւակերպմամբ, ոչնչություն է:

ԿԳ նախարարի Facebook-յան էջում արված երեկվա արձագանքին հետեւել է նախարարության բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ Ռոբերտ Սուքիասյանի՝ Panorama.am-ին տված մեկնաբանությունը, որտեղ պաշտոնյան խոստացել է առաջիկայում «գաղտնազերծել» բուհում կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Իսկ մինչ այդ ԿԳ նախարարությունը «Առավոտին» է տրամադրել որոշ փաստաթղթեր եւ Զոլյան-Աշոտյան նամակագրական «երկխոսությունը»: Մասնավորապես, մարտի 14-ի նամակով Սուրեն Զոլյանը ԿԳ նախարարից թույլտվություն է խնդրել մարտի 19-23-ը մասնակցելու Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների Եվրոպական խարտիայի փորձագետների կոմիտեի հերթական 41-րդ նիստին: Նույն գրության մեջ նշված է, թե իր բացակայության ընթացքում ռեկտորի պարտականությունները կդրվեն պրոռեկտոր Գաբրիել Բալայանի վրա: Մարտի 15-ին Ս. Զոլյանին հասցեագրված նամակով նախարարը ծանուցել է, որ ԿԳ նախարարությունը քննարկել է հարցը ու նպատակահարմար չի գտել ռեկտորի մասնակցությունը վերոնշյալ նիստին: Արդեն մարտի 22-ին պարոն Զոլյանին ուղղված նամակում Արմեն Աշոտյանը գրել է. «ՀՀ ԿԳ նախարարի 19.03.2012թ. թիվ 190-Ա/Ք հրամանով ստեղծված հանձնաժողովը մարտի 20-ից ուսումնասիրություններ է սկսել Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում: Հանձնաժողովի անդամներին ընդունել է բուհի պրոռեկտոր Գ. Բալայանը եւ տեղեկացրել, որ դուք բացակայում եք: Խնդրում եմ տալ բացատրություն Ձեր բացակայության մասին»: Այնուհետեւ մարտի 29-ին եւս մեկ ծանուցում է ուղարկվել Զոլյանին, որտեղ նշված է եղել, թե մարտի 19-23-ը անհարգելի բացակայելու, ինչպես նաեւ այդ ժամանակահատվածում ռեկտորի պարտականությունների կատարումը առանց լիազոր մարմնի (նախարարի) որոշման պրոռեկտոր Բալայանին հանձնարարելու համար ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի համաձայն՝ ռեկտորի նկատմամբ կիրառվելու է կարգապահական տույժ: Հղում անելով աշխատանքային օրենսգրքին՝ նախարարը ռեկտորին խնդրել էր մինչեւ ապրիլի 5-ը գրավոր բացատրություն ներկայացնել: Ի պատասխան՝ Վ. Բրյուսովի անվան համալսարանի ռեկտորն էլ ապրիլի 5-ի նամակում գրել է, թե նախարարի մոտեցումը հակասում է «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» եւ այլ օրենքների պահանջներին, ՀՀ Սահմանադրության, միջազգային պայմանագրերի եւ կառավարության դրույթներին: Պարոն Զոլյանը նույն նամակում նաեւ հավելել է, թե օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված չէ ԿԳ նախարարի՝ ռեկտորի գործուղման եւ գործուղման ընթացքում ռեկտորի պարտականությունները պրոռեկտորի վրա դնելու, ռեկտորին կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ որոշում կայացնելու լիազորությունը:

Ամեն դեպքում, նախարարն անդրդվելի է՝ վկայակոչելով օրենքների եւ իրավական ակտերի մի շարք դրույթներ, գտնում է, որ ռեկտորը չի կատարել վերադասի հանձնարարականը, իր մեղքով աշխատանքային պարտականությունները կատարել է ոչ պատշաճ, հետեւաբար «վաստակել է» կարգապահական տույժը:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

«Դուք եք ձեր աղագան կերտողը»

Գագիկ Ծառուկյանը քաղաքացիական գիտակցության կոչ է անում ընտրողներին

«Ես չենք եկել հեքիաթներ ասելու, ձայներ տանելու»,- երեկ Կոտայքի մարզի Եղվարդ բնակավայրում կայացած նախընտրական հանդիպման ժամանակ իր ելույթում ասաց «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանը: Հիշեցնենք, որ քարոզարշավի մեկնարկը ԲՀԿ-ն սկսել էր Աբովյան քաղաքից: Երեկ նախընտրական հանդիպումներ եղան Եղվարդում, Նոր Հաճընում եւ Բյուրեղավանում: Այսօր ԲՀԿ առաջնորդը հանդիպումներ կունենա Չարենցավանում եւ մարզկենտրոն Հրազդանում: Գագիկ Ծառուկյանին իր հարազատ մարզում դիմավորում են աղ ու հացով, ջերմությամբ: Սիրով ու հավատով են խոսում նրա մասին:

Ծառուկյանը հավաստիացրեց, որ ԲՀԿ-ի խոսքը ինչպես եղել է գործ, այնպես էլ մնալու է գործ: Ու եթե մինչեւ այսօր կուսակցությունը կարողացել է շահել ժողովրդի հարգանքը, պահպանել այն, սրանից հետո առավել եւս բարձր են գնահատելու ժողովրդի վստահությունը: «Շատ կգան, ծրագրեր, հեքիաթներ կներկայացնեն, բայց երբեք ու երբեք ոչ ոք չի կարող ասել, որ Ծառուկյանը խոսք է տվել ու դա իրականություն չի դարձրել»,- ասաց Ծառուկյանը՝ վկայակոչելով այն, որ ԲՀԿ նախընտրական ծրագրում տեղ գտած գյուղատնտեսական ավտոտրանսպորտային պարկի վերաբերյալ դրույթը արդեն իսկ իրականություն է, եւ Հայ-բելառուսական կենտրոնում են գտնվում 150 գյուղատնտեսական տրակտորներ, որոնք գյուղացիները կարող են ձեռք բերել 7 տարի մարման ժամկետով: Գագիկ Ծառուկյանը նաեւ խոսեց փոքր ու միջին բիզնեսի զարգացման անհրաժեշտության մասին, այդ ոլորտին պետական սուբսիդավորման եւ արտոնություններ տրամադրելու անհրաժեշտության մասին: «Ով ասում է՝ աշխատատեղ եմ ստեղծելու, սուտ է ասում: Զբաղվածության խնդիր է պետք լուծել: Հնարավորություն, պայման, մրցակցություն». սրանք են, ըստ Ծառուկյանի, այն անհրաժեշտությունները, որոնք երիտասարդներին հույս ու հավատ կներշնչեն ու կվերացնեն ստեղծված կարծրատիպը, թե ծանոթ-բարեկամ չունենալու դեպքում ինքն առանց աշխատանքի կմնա: «Բոլորի համար ճանապարհը մեկը պետք է լինի. բանիմացը, խելացին, արդյունավետ ճանապարհի առաջարկողն էլ պետք է հաղթի: Միայն այդ դեպքում մենք կարող ենք ունենալ հզոր, բարգավաճող պետություն, բարեկեցիկ ընտանիք»,- ասաց Ծառուկյանը՝ կոչ անելով առաջիկա ընտրություններին գնալ պատասխանատվության գիտակցումով եւ քվեարկել սրտի կամոք ու դրանով կերտել սեփական աղագան:

Ներկայացնելով օրենսդիր գործունեություն ծավալել հավակնող ԲՀԿ-ի թիմը եւ կուսակցության նախընտրական ծրագիրը՝ կուսակցության առաջնորդը նկատեց, որ անհնարին ոչինչ չկա, եւ այն ամենը, որ գրված է ԲՀԿ նախընտրական ծրագրում՝ իրենց թիմը կյանքի է կոչելու: Նրանք, ովքեր չեն գիտակցի, որ ընդգրկվում են ԲՀԿ-ի թիմում ոչ թե վայելքների, այլ ժողովրդի առջեւ պատասխանատվություն ստանձնելու համար, իրենց տեղը կզիջեն այլոց: Իսկ իրենց թիմին հետագա աշխատանքի հնարավորության դեպքում կուսակցության նախընտրական խոստումները 2-3 ամսվա ընթացքում կյանքի կկոչվեն: «Մենք երբեք ավելորդ բառեր չենք ասելու: Քիչ ասելու ենք, շատ անենք»,- ասաց նա՝ հավաքվածներին կոչ անելով. «Ընտրություններին բոլորդ մասնակցեք, ուշադիր նայեք, հետեւեք ամեն մի կուսակցության ղեկավարի ապրածը, արածը, ստեղծածը, խոսքը ու դրանից հետո կողմնորոշվեք: Ձեզ հնարավորություն է տրվել՝ որոշում կայացնելու: Դուք ձեր իրավունքները ճիշտ չեք օգտագործում: Դուք պետք է մտածեք ձեր ապագայի, ձեր երեխայի ապագայի մասին: Ես բոլորիդ շատ սիրում եմ, հարգում եմ, որպես Ծառուկյան Գագիկ՝ միշտ էլ օգտակար եմ լինելու: Աստված ինձ հնարավորություն է տվել, ես պիտի կարողանամ այդ հնարավորությունը ճիշտ օգտագործել, բայց ինձ ճիշտ հասկացեք՝ բարեգործությամբ երկիր չես կառուցի: Պետք է տնտեսությունը զարգանա, երկիրը զարգանա, որ սոցիալական վիճակը լավ լինի: Բարեգործությունը մարդու հոգու մխիթարանք է, թեթեւություն է, կամեցողություն է: Ամեն ինչ ձեր ձեռքերում է, ոչ ոքի չմեղադրեք. դուք եք ձեր ապագան կերտողը»:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Նստած էի, ո՞նց գայի»

Ուշիի բնակիչների առաջ արդարանում է Մյասնիկ Մալխասյանը

Երեկ Օհանավան եւ Ուշի համայնքներում ՀԱԿ-ի նախընտրական քարոզարշավի Կոնգրեսի ներկայացուցիչներին՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, ընդունեցին ընդամենը 30-40 բնակիչներ: Ընդ որում, նրանց մի մասը ՀԱԿ-ի ընտրազանգվածն էլ չէր. մեզ հետ զրույցում նրանք վստահեցնում էին, որ ընտրելու են ուրիշ կուսակցության կամ քվեարկելու են բոլորին դեմ:

Քարոզարշավին եկած Հրաչ պապիկը՝ Հրաչ Կարապետյանը, Ուշիի բնակիչ է, առաջին կարգի հաշմանդամ: Նրա ընտանիքի միակ եկամուտը իր ստացած թոշակն է՝ 12000 դրամ: Նրա խոսքերով՝ «Փոստում մուծվում եմ՝ տակը բան չի մնում, մնացածը նիսյայով ենք առնում: Առաջին կարգի հաշմանդամին 12 հազար են տալիս՝ էդ եղավ ապրե՞լ: Ոչ մեկն էլ արժանի չի, չեմ ընտրելու ոչ մեկին: Լավ ի՞նչ կա, որ որեւէ մեկին էլ ընտրեմ»: Մեր դիտարկմանը, որ ՀԱԿ-ն ասում է, թե ինքը այլընտրանք է այս իշխանություններին, եթե եկել եք, գուցե ինչ-որ հույս կապո՞ւմ եք նրա հետ՝ նա պատասխանեց. «Ես ոչ մեկի հետ էլ հույս չեմ կապում: Լեւոնին տեսել ենք, առաջինը Լեւոնը եկավ, մեր ժողովուրդը լավ, ընտիր ապրում էր, ավիրվավ, գնաց: Հիմքը ես խարդախությունների իրենից է դուրս եկել»: Հրաչ Կարապետյանը նաեւ բողոքեց, որ Մյասնիկ Մալխասյանը, որը 2003-ին հենց իրենց մոտ էր առաջադրվել, «մի հատ ոչ երեւում է, ոչ էլ. ընտրությունից ընտրություն ենք տեսնում: Բա էլ ի՞նչ հավատ ունենանք որ: Մենք ընդհանրապես մեր պատգամավորին էլ չենք ճանաչում, չգիտենք էլ ով է»:

Առաջին կարգի հաշմանդամ Հրաչ Կարապետյանը:

Ուշի-Օհանավան համայնքների հավաքում ընդամենը այսքան մարդ կար:

Այս առնչությամբ Aravot.am-ի հետ զրույցում նախկին քաղբանտարկյալ, ՀԱԿ անդամ Մյասնիկ Մալխասյանն ասաց. «Նստած էի, ո՞նց գայի, իրենք պետք է գային ինձ տեսնալու՝ չեկան: Ես իրենց պատգամավորը չեմ, իրենց միշտ թվում է, թե ես եմ իրենց պատգամավորը, որովհետեւ իրենց պատգամավորին չգիտեն, միայն ինձ են հիշում»:

Երբ հավաքված մի քանի բնակիչների խնդրեցինք մեկնաբանել, թե ինչու են իրենց համագյուղացիներն այսքան պասիվ մասնակցություն ունենում ՀԱԿ-ի հավաքին՝ գյուղերը դատարկվե՞լ են, էլ մարդ չկա՞, թե՞ ՀԱԿ-ի կողմնակիցներն են այստեղ քիչ՝ նրանք պատասխանեցին, որ հավանաբար վախենում են, չեն ուզում երեւալ:

ՀՈՒՓՍԻՄԵ ՁԵԲԵՁՅԱՆ

Yerevan daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 11.04.2012

ՀՅԴ-Ն ազդարարեց իր քարոզարշավի մեկնարկը

Դաշնակցությունը հայտարարեց, թե կանգնելու է ազատ քաղաքացու կողքին ու պատրաստ է հեղափոխություն անել ոչ թե փողոցում լաչառությամբ, այլ իր ծրագրերով:

Երեկ Հայ հեղափոխական դաշնակցությունն ազդարարեց իր նախընտրական քարոզարշավի մեկնարկը: Նախ՝ ՀՅԴ-Ն Մատենադարանից սկսեց իր երթն ու անցնելով մայրաքաղաքի փողոցներով՝ «Նիկոլ Աղբալյան» միության անդամների ուղեկցությամբ եւ ՀՅԴ վանկարկումներով ու կուսակցության դրոշները պարզած՝ մտավ Ազատության հրապարակ, որտեղ այդ պահին հնչում էին նաեւ Դաշնակցությանը ձոնված երգեր, ու մարդիկ կաթկթացող անձրեւի տակ պարում էին:

Հանրահավաքը բացեց ՀՅԴ ԳՄ անդամ Գեղամ Մանուկյանը, որը ողջունելով հավաքվածներին՝ ասաց, թե ողջունում է հաղթած եւ «ոչ»-ով պայքարած ժողովրդին: Նա հիշեցրեց երեք տարի առաջ ՀՅԴ-ի նախաձեռնած՝ հայ-թուրքական արձանագրությունների դեմ «ոչ»-ի շարժումը՝ հայտարարելով, թե այդ շարժումը, ի վերջո, հաղթանակ արձանագրեց՝ վիժեցնելով երկրի ապագայի համար վտանգավոր այդ գործընթացը: «Այդ «ոչ»-ով ՀՅԴ-Ն պայքարեց Հայաստանում եւ ՀՀ-ից դուրս, որովհետեւ այդ «ոչ»-ը ուներ մեծ խորհուրդ, այդ «ոչ»-ն ապահովում էր մեր սերունդների ապագան, եւ այդ «ոչ»-ը մենք պարտադրեցինք:

Այդ «ոչ»-ից անցել է երեք տարի, եւ սկսվել է նոր փորձության շրջան, մեզ սպասվում են նոր հաղթանակներ, նոր պայքար, որն անպայման ավարտվելու է հաղթանակով»,- ասաց Գեղամ Մանուկյանը՝ հավելելով, թե հիմա էլ ՀՅԴ-Ն «ոչ» է ասելու որեւէ տեսակի անարդարությունների:

Իր ելույթում ՀՅԴ Բյուրոյի անդամ Վահան Հովհաննիսյանն արձանագրեց, թե ՀՀ Սահմանադրությամբ՝ իշխանությունը պատկանում է ժողովրդին, ու շարունակեց. «Մենք եկել ենք այստեղ ոչ թե իշխանությունը խլելու, զավթելու կամ կաշառքով առնելու համար, ինչպես անում են ուրիշները, այլ եկել ենք անելու այն, ինչը օրենքներով, Սահմանադրությամբ մերն է՝ իշխանությունը ժողովրդին վերադարձնելու: Այն իշխանությունը, որը խաբեությամբ, ճնշումներով, հարստահարություններով, կաշառքով, մուրաբայով ու տուկի թելով եւ էլ չգիտեմ ինչ զիբիլ ժողովրդին բաժանելով՝ իշխանությունն առել ու ուզուրպացրել է: Մենք ուզում ենք այդ իշխանությունը վերադարձնել ձեզ»: Այդուհանդերձ, նա նաեւ հորդորեց անկեղծ լինել. «Եկեք խոստովանենք, որ իշխանությունը մեզնից խլել են՝ օգտվելով մեր թուլությունից, օգտվել են մեր վախկոտությունից, անտարբերությունից, անպատասխանատվությունից: Ինչ-որ կա մեր մեջ՝ անհաջող բան, օգտվել են դրանից եւ իշխում են շնորհիվ մեր ամենավատ հատկությունների, իսկ մենք պետք է վերադարձնենք մեր իշխանությունը՝ հենվելով մեր լավ հատկանիշների վրա՝ քաջության, խիզախության, Հայրենիքի համար զոհվելու պատրաստակամության վրա: Մենք կվերադարձնենք իշխանությունը ժողովրդին, որովհետեւ մեր ժողովուրդը դրան արժանի է»:

Նա հիշեցրեց, թե ովքեր են այսօր խորհրդարանում զբաղեցնում պատգամավորական աթոռները, եւ «ում ենք մենք հանդուրժել»՝ «անգրագետների, կաշառակերների, մարդկանց, որոնք կաղնու հաստությամբ վիզ ունեն եւ կաղնու չափ խելք: Մենք նրանց հանդուրժել ենք, որովհետեւ թույլ ենք եղել: Հիմա, երբ մենք ուժեղ ենք, թույլ տալո՞ւ ենք նրանց շարունակելու մտնել խորհրդարան»: Պատգամավորի այս հարցադրմանը հանրահավաքի մասնակիցները արձագանքեցին «ոչ»-ով:

Վահան Հովհաննիսյանն ասաց, թե Դաշնակցությունը գալիս է ժողովրդին վերադարձնելու նրա ազատությունն ու իշխանությունը: Նա նաեւ նկատեց, թե շատերը ՀՅԴ-ն ասոցացնում են հեղափոխության հետ եւ կարոտում են ՀՅԴ-ի հեղափոխականությունը, բայց նույն պահին էլ բացատրեց, թե ՀՅԴ-ի հեղափոխականությունը «փողոցներում լաչառություն անելու մեջ չէ», այլ նրա կողմից առաջարկվող ծրագրերում է, ու եթե այդ ծրագրերում մատնանշված կետերը «մենք հնարավորություն ունենանք էջ առ էջ կյանքի կոչելու, ապա հեղափոխությունը ոչ թե ձեր երեխաները, այլ ինքներդ եւ շատ արագ կտեսնեք»:

Հանրահավաքում ելույթ ունեցավ նաեւ ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը, ով զավեշտ համարեց ՀՀԿ-ի՝ «Հավատանք, որ փոխենք» կարգախոսը: «Եթե լավ է, ի՞նչը պետք է փոխենք, իսկ եթե վատ է, ինչո՞ւ պիտի ձեզ չփոխենք»,- հռետորական հարցադրում արեց նա՝ հայտարարելով, թե պետք է վերջ դնել այն փարիսեցիությանը, որն առկա է ՀՀ պետական համակարգում, երբ մարդիկ ապրում են մի կյանքով, բայց լրիվ այլ հայտարարություններ են անում: Նա ՀՅԴ-ի խնդիրը համարեց առաջիկա ընտրություններում երկրում ստեղծված վիճակից դուրս գալու ճանապարհը ցույց տալը եւ իբրեւ այդպիսի ճանապարհ մատնանշեց ՀՅԴ-ի նախաձեռնած «Քվեն ուժ է» շարժումը: Նա ասաց, որ եթե այս ընտրությունների ժամանակ էլ քաղաքացին ընտրական իրավունքի համար չպայքարի, ապա պարտավորված է լինելու հանդուրժելու իր բոլոր մյուս իրավունքների խախտումները: Նա նաեւ կարեւորեց ոչ միայն իշխանությունների, այլեւ համակարգային փոփոխություններ կատարելը, այդ թվում՝ կառավարման համակարգում՝ անհրաժեշտ համարելով նախագահական համակարգից խորհրդարանական համակարգի անցումը, հայտարարելով, թե նախագահական համակարգը մեր երկրում իրեն այդպես էլ չարդարացրեց:

ՀՅԴ ԳՄ անդամ Աղվան Վարդանյանն էլ ելույթ ունեցավ ու ասաց, թե ՀՅԴ-ն պատասխանատու է Հայաստանի ամեն մի քաղաքացու համար ու պարտավոր է հաղթել. «Մենք պարտավոր ենք այնպիսի երկիր կառուցել, որ յուրաքանչյուր քաղաքացի իրեն հպարտ ու արժանապատիվ զգա: Մենք պարտավոր ենք օրենքի խստությամբ պատժել հայ մարդուն սպառնացողներին ու ստորացնողներին: Մենք թշնամի չենք փնտրում, բայց կկտրենք այն ձեռքը, որ թշնամանքով մեզ վրա կբարձրանա»:

Նա հավաքվածներին հորդորեց չվախենալ եւ աշխատել Դաշնակցության համար, քվեարկել Դաշնակցության օգտին. «Ձեր մի մազին էլ չեն համարձակվի դիպչել: Ծանոթացեք պայքարի մեջ մտած կուսակցությունների ծրագրերին, նայեք նրանց անցյալը, տեսեք՝ ովքեր են նրանց թիմերում: Վստահ եմ՝ կհամոզվեք՝ Դաշնակցությունը տարբերվում է բոլորից: Մենք ամբոխավար չենք, մենք նոռոմ խոսքեր չենք ասում, պոզա չենք ընդունում, մեր տեսակը չի դավաճանում: Մենք գիտենք, որ ամենօրյա ծանր աշխատանքով ու նվիրումով է հնարավոր երկիրը երկիր դարձնել: Դաշնակցությունը մեր երկրում օրենք եւ արդարություն է հաստատելու: Դաշնակցությունը կանգնելու է ամեն մի ազատ քաղաքացու կողքին»:

ՀՅԴ-ի երեկվա հանրահավաքն ավարտվեց համերգային ծրագրով, որն ուղեկցվում էր Երվանդ Երզնկյանի նվագախմբի կատարմամբ: Դաշնակցության հանրահավաքը, որով տրվեց նախընտրական քարոզարշավի մեկնարկը, ավարտվեց հրավառությամբ:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

«Ընդդիմությունն ազգի թշնամի չէ»

Այն, ըստ ՀՀ նախագահի, իշխանությունների զգոնության պայմանն է

Նախագահին իր հարազատ համայնքում դիմավորելու համար Երեւանի Էրեբունի համայնքի նախկին թաղապետ, ներկայումս այդ տարածքից մեծամասնական ընտրակարգով ՀՀԿ-ի կողմից պատգամավորության թեկնածու առաջադրված Միհեր Սեդրակյանը լավ էր նախապատրաստվել: Սասունցի Դավթի արձանին հարող կայարանամերձ հրապարակում ՀՀԿ նախագահ եւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի նախընտրական խոստումները լսելու էին բերվել ոչ միայն համայնքի բնակիչները, դպրոց-մանկապարտեզների եւ այլ հիմնարկ-ձեռնարկությունների կոլեկտիվները, այլեւ Երեւանի արդյունաբերական պետական քոլեջի ուսանողները: Ոմանք եկել էին դժգոհ, ոմանք՝ ըմբոնումով մոտենալով, բայց բոլորի տրամադրություններն էլ բացվեցին հայկական էստրադայի երգիչ-երգչուհիների ելույթներից, մանավանդ, որ վերջիններս հավաքվածներին անընդհատ «տաքանալու» կոչեր էին անում: Ոգեւորությունն այն աստիճանի էր հասել, որ երիտասարդները նախագահի արտասանած ամեն մի նախադասության վրա հումորներ էին անում, իրար մեջ փսփսում էին՝ «արա, ծափ տվեք, թող պրծնի-գնա, մի քիչ էլ պարենք», ու չէին արժանանում ավագների նախատինքներին:

Նախագահն էլ շնորհակալություն հայտնեց երեբունցիներին նախկինում իրեն եւ ՀՀԿ-ին տված ձայների համար, խնդրեց մայիսի 6-ին էլ քվե տալ ՀՀԿ-ի եւ Միհեր Սեդրակյանի օգտին: Իսկ իր ելույթում ասաց. «Նախորդ տարիներին, որպես իշխող ուժ, ՀՀԿ-ն ինչ որ արել է, ձեր աչքի առջեւ է: Ոչ թերություններն ենք թաքցրել, ոչ հաջողություններն ենք թմբկահարել»: Ասաց, որ իրենք շատ են աշխատել՝ արդարացնելու համար հանրության վստահությունը, համարելով, որ իշխանությունը նախեւառաջ տքնաջան աշխատանք է, պատասխանատվություն է, վայելք չէ:

ՀՀԿ-ի վարած արտաքին քաղաքականությունը նախագահը համարեց «կշռադատված», ասաց՝ «հավատով ու խղճով» միշտ քայլ են արել, եւ այդ նախաձեռնությունները եղել են նպատակային: «Ավելի համարձակ ենք շարունակելու: Մի քանի տարի, եւ մենք կպահովենք աշխարհում ՀՀ-ի դերի եւ ընկալման բոլորովին ուրիշ մակարդակ»,- ասաց Նախագահը՝ հավելելով, որ ՀՀԿ-ն ներքին քաղաքական ոլորտում էլ իր քայլերը նույնպես «խղճով» է արել, ու շարունակելու են ընդդիմախոսելու եւ քաղաքական բանավեճ վարելու նոր ավանդույթի ձեւավորումը: Հարցերը հանգիստ ու սթափ քննարկելու, խաղաղ ընտրությունների գնալու պատասխանատվությունը նույնպես մնում է ՀՀԿ-ի օրակարգում. «Ընդդիմախոսներին առանց ազգի թշնամի հայտարարելու՝ ընդդիմախոսելու իրավունքը վերադարձնելն է, որ շարունակվելու է, որովհետեւ ընդդիմությունն իշխանությունների զգաստության եւ զգոնության պայմանն է, նրա գործունեության արդյունավետության կարեւոր բաղադրիչը»,- ասաց Սերժ Սարգսյանը՝ հավելելով, որ դա չի նշանակում, թե քննադատությունն իրեն դուր է գալիս, բայց իշխանությունը պարտավոր է հանդուրժող լինել. «Սա է մեր առաքելությունը»:

Նախագահն ասաց, որ ՀՀԿ-ի համար առաջնային են անհատը, անհատի իրավունքն ու ազատությունները, խոստացավ, որ մի քանի տարի անց այդ արժեքները մեր երկրում այլ մակարդակի վրա կլինեն: Խոսեց «մատչելի արդարադատությունից» եւ բոլոր վեճերի արդարացի լուծման երաշխիք տվեց:

Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կոոպերատիվի տերերն ընդդեմ Հերմինե Նաղդալյանի ամուսնու

Նրանք պնդում են, որ ԱԺ պատգամավորի ամուսինը իրենցից 14 բնակարան է տոկոսով գրավ վերցրել մեծ գումարների դիմաց:

Այս օրերին Աջափնյակ եւ Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվում է «Նորաշեն-2007» կոոպերատիվից տուժած քաղաքացիների գործը: Որքան էլ գործը վարող մարմինը՝ Հատուկ քննչական ծառայությունը (ՀՔԾ), ջանքեր գործադրեց ՀՀԿ պատգամավոր Հերմինե Նաղդալյանի ամուսնուն՝ Դավիթ Բեգլարյանին, որը Էջմիածնի հարկայինի նախկին պետն էր, գործից «մաքուր» հանել, այդուամենայնիվ՝ դատարանում ցուցմունք տվող մեղադրյալներ Արմեն Թադեւոսյանն ու Լուսաբեկ Սամվելյանը, որոնք հանդիսանում են կոոպերատիվի տերերը, արդեն երկրորդ անգամ է՝ պնդում են Դ. Բեգլարյանի՝ նրանց տոկոսով գումար տալու մասին: Սա այն կոոպերատիվն է, որի տերերը բնակարան հատկացնելու դիմաց հարյուրավոր քաղաքացիներից հավաքել էին հազարավոր դոլարներ ու անհետացել: Բնակիչները պարզել էին, որ իրենց բնակարանները խոշոր գումարների դիմաց գրավ են դրված մի շարք ֆիզիկական անձանց մոտ: Այդ բնակարաններից Հերմինե Նաղդալյանի ընտանիքին բաժին էր ընկել 14 բնակարան: Չնայած դրան, նրա ամուսնու՝ տոկոսով գումար տալու փաստը նախաքննական մարմինը համարել էր չհաստատված: Այսօր կոոպերատիվի տերերը կալանավորված են:

Երեկ նիստը վարող դատավոր Վազգեն Ռշտունին լսեց գործով տուժող ճանաչված բնակիչներին: Եվ մինչ կոոպերատիվի տերերից «քցված» քաղաքացիները մանրամասն կնկարագրեին, թե ինչ պայմաններում եւ ինչպես են ծանոթացել Ա. Թադեւոսյանի ու Լ. Սամվելյանի հետ ու ձեռք բերել վիճահարույց բնակարանները, Արմեն Թադեւոսյանը դատարանում հայտարարություն արեց՝ եւս մեկ անգամ շեշտելով տիկին Նաղդալյանի ամուսնու՝ տոկոսով գումար տալու փաստը, եւ կոչ արեց խոստովանել, ինչը, Ա. Թադեւոսյանի կարծիքով, կնպաստի, որպեսզի հնարավորինս շուտ լուծում ստանա այս հարցը. «Որքան շուտ վերադարձվեն այդ գույքերը, այնքան շուտ հարցը կլուծվի»:

Նշենք, որ կոոպերատիվի տերերը ՀՔԾ-ում տված իրենց ցուցմունքներում հայտնել են, որ Հերմինե Նաղդալյանի ամուսին Դավիթ Բեգլարյանից վերցրել են $300 հազար ամսական 5%-ով գումար եւ գրավադրել են 14 բնակարան: Նրանք իրենց ցուցմունքներում, ի թիվս Դ. Բեգլարյանի, մոտ 20 այլ անձանց էլ են մատնանշել, որոնք տոկոսով գումարի դիմաց տուն են գրավադրել: Այդ բոլոր մարդկանց, բացի Բեգլարյանից, ՀՔԾ-ն ճանաչել է վաշխառու: Ա. Թադեւոսյանի ու Լ. Սամվելյանի աշխատանքային ցուցակում, որը քրեական գործով ճանաչվել է աղցուցողական նյութ, Դավիթ Բեգլարյանի անունը զբաղեցնում է մեջտեղի տողերը:

Մեջբերում ենք նաեւ Դավիթ Բեգլարյանի՝ ՀՔԾ-ին տված 10.05.2011թ.-ի ցուցմունքից, որտեղ նա խոստովանում է, որ տները գնել է վերադարձնելու պայմանով՝ որ կստանա 20-25% ավելի վճարած գումարից:

Երեկ դատարանում «Առավոտի» հարցին ի պատասխան, թե՝ պնդո՞ւմ է, որ տիկին Նաղդալյանի ամուսինը իրեն տոկոսով փող է տվել, Արմեն Թադեւոսյանն ասաց՝ այո:

Գործով տուժող ճանաչված Հայկ Խաչատրյանը կոոպերատիվի տերերից պահանջում էր իր երեք բնակարանները, որոնց համար նախապես վճարել էր մոտ 23 միլիոն դրամ գումար, մնացածն էլ, ըստ կոոպերատիվի տերերի հետ սահմանած ժամանակացույցի, պետք է վճարեր շենքի շինարարությունը ավարտին հասցնելուց հետո: Սակայն մի օր Հ. Խաչատրյանը պարզել էր, որ իր բնակարանները գրավադրված են մի անծանոթ կնոջ մոտ: Այս վկայի պարզաբանումներին ի պատասխան՝ կոոպերատիվի տերերը պնդում էին, որ Հ. Խաչատրյանն ընդամենը մեկ բնակարանի համար է իրենց վճարել: Մինչդեռ Հ. Խաչատրյանը ստիպված եղավ մի քանի անգամ հիշեցնել իր ու շենքի տերերի միջեւ եղած պայմանավորվածության մասին: Դատավորը տեսնելով, որ կողմերը իրար այնքան էլ լավ չեն հասկանում, միջամտեց՝ հստակեցնելով տուժողի ցուցմունքը:

Մեկ այլ տուժողի՝ Վարդուհի Ավետիսյանի բախտն այնքանով էր բերել, որ նրա բնակարանը միայն իրեն էր պատկանում, սակայն կոոպերատիվի տերերի՝ փողերն «առնել-թռնելուց» հետո շենքի տանիքի կառուցումը կիսատ է մնացել, ինչի հետեւանքով բնակիչը չի կարողանում իր տանն ապրել, բացի այդ՝ բնակարանի հետ կապված կիսատ-պռատ աշխատանքներ կան: Նրա բնակարանը 12-րդ հարկում է: Նա Ա. Թադեւոսյանին ու Լ. Սամվելյանին է վճարել 7 միլիոն 43 հազար դրամ:

Տուժող Նաիրա Վարժապետյանը 80,7 քմ տարածքով բնակարան է գնել շենքի 7-րդ հարկում, սակայն գնել է արդեն վաճառված բնակարան: Նա իր գործարքն ամրագրել է նոտարով, այդուհանդերձ՝ այսօր կանգնել է խնդիրների առաջ: Տիկին Վարժապետյանն էլ վճարել է բնակարանի 80 տոկոս գումարը, որը ներկայիս դրությամբ կազմում է 13 միլիոն 200 հազար դրամ:

Ն. Վարժապետյանը դատավորին պատմեց, որ տեղեկություններ էր ստացել, թե կոոպերատիվին պատկանող շենքը վաճառվել է ոմն Արտաշես Մելիքյանի, սակայն այս հայտարարությանն ի պատասխան՝ Արմեն Թադեւոսյանն ասաց, որ իրենք շենքի բնակիչների հետ կազմակերպած ժողովներից մեկում պարզապես հայտնել են, որ պարոն Մելիքյանը պետք է օգնի շենքի շինարարությունն ավարտին հասցնելու համար:

Տուժող ճանաչված մյուս բնակիչներին կլսեն հաջորդ նիստերի ընթացքում:

Այս գործով մեղադրող դատախազը Հարություն Հարությունյանն է: Բնակիչները մեզ հետ զրույցում մտահոգություն հայտնեցին, որ պարոն Հարությունյանը կողմնապահություն է անում հոգուտ ԱԺ պատգամավոր Հերմինե Նաղդալյանի ամուսնու: Եվ նախորդ նիստին պարզապես «մի տեսակ» է եղել, երբ կոոպերատիվի տերերը դատարանում պնդել են իրենց նախաքննական ցուցմունքները Դավիթ Բեգլարյանի մասով:

ԼՈՒՍԻՆԵ ԲՈՒԴԱՂՅԱՆ

ՀՀԿ-ի հանրահավաքին ստիպողաբա՞ր էին տարել

Երեկ Հայաստանի հանրապետական կուսակցությունը Երեւանի Էրեբունի վարչական շրջանում նախընտրական բազմամարդ հանրահավաք ապահովելու համար այդ շրջանի բոլոր պետական կառույցների աշխատակիցներին ներքին կարգով հրահանգել էր անպայման ներկա լինել հավաքին: Համենայնդեպս, այսպես էին վստահեցնում «Առավոտի» խմբագրություն ահազանգած մի շարք քաղաքացիներ: Ընդ որում, ըստ բնակիչների՝ պետական աշխատողներն էլ իրենց ծանոթ-բարեկամներին, ենթականերին էին հորդորել մասնակցել ՀՀԿ-ի հանրահավաքին: Մեզ զանգահարած քաղաքացիները հավաստիացրին, որ նրանց սպառնում են՝ ՀՀԿ հանրահավաքին ներկա չլինելու դեպքում լուրջ խնդիրներ կունենան: Օրինակ՝ զանգահարողներից մեկը պատմեց, որ իր երեխաներից մեկի մանկապարտեզի դաստիարակը ծնողներին հորդորել է ներկա լինել ժամը 18.00-ին կայանալիք հանրահավաքին. «Մենք, անկեղծ ասած, մի քիչ զարմացանք ու հրաժարվեցինք, սակայն դաստիարակն այնպիսի տոնով խոսեց մեզ հետ, վախեցանք, որ մեր չգնալու համար երեխաները կտուժեն: Մանկապարտեզի դաստիարակը նույնիսկ փորձեց արդարանալ, որ ինքը ոչ մի կապ չունի ՀՀԿ-ի հետ, բայց թաղապետարանից են նրան հրահանգել: Ասաց՝ բա մեր ջանը քա՞ր ա, որ մենք էլ ուզած-չուզած՝ գնալու ենք»:

Բնակիչներից մեկի պատմելով էլ՝ Էրեբունի վարչական շրջանի մի քանի դպրոցների աշխատակիցներին նույնպես հորդորել են թե՛ իրենք, թե՛ բարձր դասարանի աշակերտները եւս՝ եթե կարող են ծնողներին ու իրենց հարեւան-բարեկամներին հավաքել ու մասնակցել հանրահավաքին:

Ն. Բ.

Մի օր շուտ գնար՝ ավելի գումար չէր վճարի

«Օրանժը» վստահեցնում է, որ իրենք բաժանորդներին տեղեկացնում են պայմանագրով սահմանված կետերը

Արարատի մարզի Տափերակ գյուղի բնակիչ Ֆելիքս Մինասյանը, իր իսկ խոսքերով ձեւակերպած՝ կենսաթոշակի մի մասը անտեղի վճարել է չօգտագործած ինտերնետի համար: Թոշակառուի պատմելով՝ 3 բջջային օպերատորներից գերադասել է օգտվել «Օրանժի» «Ինտերնետ-հիմա» ծառայությունից, բայց ընդամենը մեկ ամիս հետո տեսել է, որ կապն իրեն չի արդարացնում, քանի որ ինտերնետի խոստացած արագություն չեն ապահովել: Պարոն Մինասյանի խոսքերով՝ նախորդ տարվա հոկտեմբերին գնել է «Օրանժի» 6000 դրամանոց ինտերնետն առանց մոդեմի. «Բայց ինտերնետի արագությունը չէր գերազանցում 0.2մբ վայրկյանը, իսկ կեսօրից հետո ավելի էր վատանում: Ես նույնիսկ skype-ից չէի կարողանում օգտվել: Միայն տեղական մի քանի էլեկտրոնային լրատվամիջոցներ էի հազիվ կարողանում կարդալ: Բայց ես բաժանորդ էի դարձել նորմալ ինտերնետ ունենալու ակնկալիքով: Իսկ երբ հասկացա, որ «Օրանժի» ինտերնետը ոչ էլ կլավանա, որոշեցի դադարեցնել պայմանագիրս: Իրենց գրասենյակում վստահեցրին, որ եթե մի օր շուտ դիմեի, մյուս ամսվա վճարը՝ 6000 դրամը,



չէի կատարի, ու պայմանագիրն էլ կլուծարեին»: Ըստ Ֆելիքս Մինասյանի՝ որոշ ժամանակ հետո «Օրանժի» գրասենյակից նամակ է ստացել, որ պարտավոր է վճարել 18 հազար դրամ, հակառակ դեպքում այդ գումարը կբռնագանձվի դատարանի միջոցով, ընդ որում՝ դատարանի ծախսերն էլ բաժանորդն է կատարելու. «Անհասկանալի է, թե դա ո՞նց են հաշվարկել: Բայց ամբողջ խնդիրն այն է, որ երբ դիմել էի, գոնե գային ստուգեին, թե ինչո՞ւ է իմ ինտերնետն այդքան վատ, պատասխանեցին՝ իբր գյուղերում չեն կարող ստուգել: Իսկ իրենց տրամադրած պայմանագրում ոչ մի կետ չկա իրենց պարտավորությունների մասին, կամ էլ թե՝ ո՞ր դեպքում բաժանորդն իրավունք ունի դադարեցնել պայմանագիրը: Այսինքն՝ սպառողը հասկանա, թե պայմանագիր կնքելուց ու այն դադարեցնելուց հետո իրեն ի՞նչ է սպասվում»:

Այս առնչությամբ «Օրանժ-Արմենիա» ընկերությունից այսպես պարզաբանեցին. «Բաժանորդը, որին վերաբերում է հարցը, կնքել է ինտերնետի բաժանորդային պայմանագիր 2011թ. հոկտեմբերի վերջին՝ առանց մոդեմ ձեռք բերելու եւ հետեւաբար՝ առանց բաժանորդ մնալու պարտավորության: Սա նշանակում է՝ եթե մատուցվող ծառայության որակը նրան չէր բավարարում, ապա կարող էր դադարեցնել պայմանագիրը առանց որեւէ այլ պարտավորության՝ այցելելով ցանկացած խանութ եւ լրացնելով համապատասխան ձեւը: Այս մասին կարելի է ծանոթանալ բաժանորդագրության «Ընդհանուր դրույթներ եւ պայմաններ»-ում, որը հասանելի է ինչպես Orange-ի բոլոր խանութներում, այնպես էլ մեր պաշտոնական վեբկայքում՝ հենց առաջին էջից (կետ 13.3 եւ 13.6): Ինչ վերաբերում է այն հարցին, որ ամսվա առաջին օրը նա արդեն չի կարողացել դադարեցնել պայմանագիրը՝ առանց վճարելու տվյալ ամսվա համար, ապա դա բնական է, քանի որ, ըստ մեր ինտերնետ ծառայության բնութագրի, ինտերնետի ծավալը բաժանորդի հաշվին է փոխանցվում յուրաքանչյուր ամսվա առաջին օրը, հետեւաբար պայմանագիրը դադարեցնելու դիմումը նա պետք է ներկայացներ նախորդող ամսվա ընթացքում, գոնե՝ վերջին օրը, ինչը, ցավոք, նա չի արել»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

Yerevan daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 11.04.2012

«Ղարաբաղ» կոմիտեի հիմնադիր անդամի վերջին խոսքը

Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մխիթար Պաղոյանի նախագահությամբ շարունակվեց Գագիկ Սաֆարյանի դեմ հարուցված քրեական գործով դատական վիճաբանությունների փուլը:

Գագիկ Սաֆարյանը մեղադրվում էր խարդախության համար. 21 000 դոլար վերցնելու եւ դրա միջոցով Սամվել Կոստանյանի որդուն բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունելու համար:

Սամվելի որդին բուհ ընդունվել է, բայց ոչ այն բուհը, որի համար նրա ընկերոջ միջոցով գումար էր տրվել Գագիկ Սաֆարյանին:

Մեղադրող Արմեն Բոշնաղյանը պահանջել է 6 տարվա ազատազրկում:

Գագիկ Սաֆարյանը հանդես կավ պաշտպանական ճառով:

Նա ասաց, որ չի ընդունում մեղադրանքը, քանի որ ինքը պարտքո�ahանջ չունի: Ավելին, կրկնակի անգամ վճարել է տուժողին, բայց ոչ թե՝ որ պարտք է նրան, այլ՝ որ տվել է իր ընկերոջ պարտքի գումարը:

«Սխալս այն էր, որ ստացական կամ գիր չեմ պահանջել նրանից»,- ասաց նա:

«Չգիտեմ՝ ինչ վճիռ է ինձ սպասվում, բայց կարող եմ ասել, որ հայտնվել եմ գերու կամ պատանդի վիճակում: Իմ անմեղությունը պիտի ապացուցեմ մինչեւ վերջ: Ինչ եմ կորցնում անցյալ տարվանից «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում գտնվելով. 40 կգ անձնական քաշս, 2 անչափահաս երեխա եւ խնամքիս տակ գտնվող ընտանիքիս, 30 հազար դոլար գումարս: Ես չեմ կատարել այն արարքը»,- ասաց Գ. Սաֆարյանը:

Նա ներկայացրեց իրեն, որ «Ղարաբաղ» կոմիտեի հիմնադիր անդամ է եղել, 1990-91թթ. կառավարության օպերատիվ շտաբի ներկայացուցիչ, Արցախի ազգային խորհրդի անդամ, «Փյունիկ» ֆուտբոլային թիմի նախկին տնօրեն:

Նկարագրեց, թե ինչպես է իրեն 2009թ. օգոստոսի 24-ին ազգային անվտանգության ծառայությունը ձերբակալել խարդախության համար:

2010թ. մայիսի 13-ին Երեւանի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը նրան դատապարտել է 2 տարվա պայմանական ազատազրկման:

Ըստ Գ. Սաֆարյանի, իրեն ազգային անվտանգության ծառայությունը ձերբակալել է առանց հիմնավոր մեղադրանքի: Եվ որ իր գործով քննիչ, ԱԱԾ փոխգնդապետ, վարչության պետի տեղակալ Արմեն Տեր-Մինասյանը կաշառք վերցնելու համար ($7000, Ուջան գյուղի բնակիչ Տիգրան Պետրոսյանից) արդեն դատապարտվել է եւ գտնվում է «Վարդաշեն» ՔԿՀ-ում:

Նա հայտարարեց, որ ինքը անձնական վրեժխնդրության զոհ է, որ իր նկատմամբ վրեժ է լուծել ԱԱԾ գեներալ Ցավեն Նանյանը, որն, ի դեպ, 2010թ. հունվարին հեռացվել է ԱԱԾ համակարգից՝ պետական միջոցները վատնելու մեղադրանքով:

Գ. Սաֆարյանն ասաց, որ կյանքի գնով պատրաստ է ապացուցելու, որ ինքն արդար է, եթե անգամ իր նկատմամբ ազատազրկման դատավճիռ կայացվի:

Դատարանն անցավ խորհրդակցական սենյակ՝ վճիռ կայացնելու:

Գագիկ Սաֆարյանին դատարանը դատապարտեց 5 տարվա ազատազրկման:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

Հիշեցին Մարաղայի ցեղասպանությունը

2012թ. ապրիլի 10-ին «Ընդդեմ իրավական կամայականության» հ/կ-ն կազմակերպել էր «Մարաղա՝ 20-րդ տարելից» խորագրով միջոցառումը՝ նվիրված ԼՂՀ Մարաղա գյուղում Ադրբեջանի կողմից հայ ժողովրդի դեմ իրականացված ցեղասպանության հերթական գործողության տարելիցին:

1992թ. ապրիլի 10-ին Մարաղա գյուղը ենթարկվեց հարձակման Ադրբեջանի կանոնավոր բանակի ռազմական զորամասերի կողմից, ինչի արդյունքում գյուղը հիմնովին ավերվեց, սպանվեցին տասնյակ բնակիչներ, նրանց մարմինները ողնվեցին, մասնատվեցին ու այրվեցին: Երկու շաբաթ անց գյուղը կրկին ենթարկվեց հարձակման, վերադարձած բնակիչները բռնագաղթվեցին, տները կողոպտվեցին, դրանցից շատերը հրկիզվեցին: 1992թ. մայիսի 1-ի դրությամբ պատանդության մեջ գտնվող անձանց թիվը 57 հոգի էր, որոնցից 9 երեխա եւ 29 կին, իսկ սպանվածներինը՝ 59: Մինչ օրս գյուղի 19 բնակիչ անհայտ կորածների ցուցակում են: Միջոցառման նպատակն է ոչ միայն հիշատակել Մարաղայի անմեղ զոհերին, ում դեմ իրականցվել է այդ դաժան հանցագործությունը, այլեւ նպաստել մարդկության դեմ նման հանցագործությունների կանխարգելմանն ամբողջ աշխարհում: Ելույթներում բարձրաձայնվեցին այդ հանցագործության իրական պատճառներն ու նպատակը. ըստ մասնակիցների, Մարաղայում տեղի ունեցածը ցեղասպանության հերթական գործողություն է՝ իրականացված Ադրբեջանի կողմից, որը շարունակում է հայերի արտաքսմանը, իրեն չպատկանող տարածքների բռնակցմանը եւ ռասիզմի բացահայտ քարոզմանն ուղղված ռազմատենչ քաղաքականությունը: Մասնակիցների ուշադրությանը ներկայացվեց «Սովորական Ցեղասպանություն. Մարաղա, 10 ապրիլի 1992» փաստագրական ֆիլմը, որը պատրաստվել է ՀՀ նախագահի աշխատակազմի Հանրային կապերի եւ տեղեկատվության կենտրոնի կողմից: Ֆիլմում ներկայացվել են մինչ օրս Ադրբեջանի վերահսկողության ներքո գտնվող Մարաղա գյուղի հանդեպ իրագործված հանցագործության՝ լայն հասարակության համար անհայտ փաստեր ու մանրամասներ:

Ալավերդու «Էնդհաուզի առեղծվածը»

Ալավերդի քաղաքում, Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշարձանի հարեւանությամբ, գեղատեսիլ բնության գրկում հառնում է շքեղ այս կառույցը: Այն նախկին անտառտնտեսության շենքն է, որ վերակառուցվելուց հետո հնդիկ մահարաջայի պալատ է հիշեցնում: Ալավերդու մեր աղբյուրները հայտնում են, որ այն գրանցված է ալավերդցի Հարություն Շոլինյանի անունով: Հ. Շոլինյանը ճանապարհի եզրին գտնվող սրճարանի տերն է: Ալավերդցիները լուրջ կասկածներ ունեն, որ դդյակի փաստացի տերը բարձրաստիճան պաշտոնյա է: Ճշմարտությունը կպարզվի, երբ շենքի կառուցապատումն ավարտվի, եւ այն բնակեցվի:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

«Ինտերնետ փաթեթներ»՝ նոր ծառայություն բջջային ցանցի բաժանորդների համար

«Ինտերնետ փաթեթ» ծառայությունը հնարավորություն է ընձեռում Beeline բջջային ցանցի բաժանորդներին ուղարկել եւ ստանալ ինտերնետ տրաֆիկի որոշակի քանակություն՝ վճարելով ֆիքսված գումար: Այսպես՝ 10ՄԲ ծավալով «Մինի ինտերնետ փաթեթի» արժեքը 200 դրամ է, իսկ «Միդի», «Մաքսի» եւ «Սուպեր Մաքսի» փաթեթները, որոնք ներառում են 50ՄԲ, 100ՄԲ եւ 300ՄԲ, համապատասխանաբար՝ արժեն 600 դրամ, 900 դրամ եւ 1500 դրամ:

«Հայաստանում օրեցօր աճում է սմարթֆոնների եւ զանազան ինտերնետ ծրագրերով աշխատող բջջային հեռախոսներից օգտվողների թիվը: Նոր տեխնոլոգիաների առավելություններն ակնհայտ են, իսկ «ԱրմենՏել» ընկերությունը հեռու չի մնում բջջային կապի ոլորտի նոր զարգացումներից: Այսուհետ մեր բաժանորդները, կախված իրենց կողմից օգտագործված տրաֆիկից, կարող են միանալ այս կամ այն փաթեթին եւ օգտագործել իրենց հեռախոսի հնարավորությունները՝ չմտածելով հավելյալ վճարումների մասին»,- նշեց «ԱրմենՏել» ՓԲԸ գլխավոր տնօրեն Իգոր Կլիմկոն:

Կանխավճարային համակարգի բաժանորդներին փաթեթները տրամադրվում են 30 օր ժամկետով՝ սկսած ակտիվացման օրվանից: Ինտերնետ-փաթեթի գործողության ժամկետում նոր փաթեթ միացնելու դեպքում, նոր փաթեթի ՄԲ-երը ավելանում են դեռեւս չսպառված ՄԲ-երին, իսկ գործողության ժամկետը սահմանվում է 30 օր նոր փաթեթի միացման պահից: Այս ծառայությունից կարող են օգտվել թե՛ կանխավճարային, թե՛ հետվճարային համակարգի բաժանորդները:

Ծառայությունն ակտիվացնելու, ինչպես նաեւ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար այցելեք մոտակա վաճառքի եւ սպասարկման գրասենյակ կամ www.beeline.am կայք:

«Արմավիայի» գումարները յուրացրել է

Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում, դատավոր Արմեն Խաչատրյանի նախագահությամբ, երեկ՝ ժ.10-ին, պետք է սկսվեր Հովհաննես Մխոյանի դեմ հարուցված քրեական գործի դատաքննությունը:

Քրեական գործը դատարան էր ուղարկվել մարտի 7-ին:

Հովհաննես Մխոյանը մեղադրվում էր «Արմավիա» ավիաընկերության չվերթների համար նախատեսված ավիատոմսերի վաճառքից ստացված գումարները յուրացնելու համար: Գումարի չափը կազմել էր 8 474 056 ՀՀ դրամ: Սակայն մեղադրողը հիվանդ էր եւ չէր ներկայացել դատարան, ինչի համար էլ նիստը հետաձգվեց:

Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ

Վարորդը ներկայացել է

Ապրիլի 9-ին, ժամը 20.20-ին, «ՎԱԶ-2105» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Ոսկետափ-Ուրցաձոր ճանապարհի 7-րդ կմ-ին վրաերթի է ենթարկել մի տղամարդու, նրան տեղափոխել հիվանդանոց, այնուհետեւ ներկայացել բաժին:

Հրդեհ՝ օդամղիչ կայանում

ՀՀ ոստիկանությունից տեղեկացրին, որ Երեւան քաղաքի վարչության հերթապահ մասում հաղորդում է ստացվել, որ Ռաֆֆու փողոցի թիվ 99/3 հասցեում գտնվող գազալցակայանի օդամղիչ կայանում հրդեհ է բռնկվել: Հրդեհը մարվել է:

Հանգամանքները պարզվում են:

Գազի թունավորումներով

Հիվանդանոցից ոստիկանության Մալաթիայի բաժնում ահազանգ է ստացվել, որ Հաղթանակ թաղամասի 6-րդ փողոցի թիվ 1 տան խոհանոցում տեղադրված գազի կաթսայից տեղի ունեցած շմոլ գազի արտահոսքից թունավորվել է տան բնակչուհի՝ 1975թ. ծնված Արեւիկ Եղիազարյանը: Կատարվում է նախաքննություն:

Իսկ Գյումրիի բաժնում հաղորդում էր ստացվել, որ գազի թունավորումով Զամբուլի փողոցի թիվ 30 տնից իրենց մոտ բուժօգնության են տեղափոխվել հիշյալ տան բնակիչ, 2008թ. ծնված Վարդուշ Պողոսյանը եւ հնոցավան 1-ին շարքի թիվ 14 տան բնակիչներ՝ 2001թ. ծնված Մինաս Նիկողոսյանը ու 1998թ. ծնված Հովհաննես Նիկողոսյանը:

Պարզվել էր, որ նրանք թունավորվել են Զամբուլի փողոցի թիվ 30 տանը ջեռուցման կաթսայի թերայրման հետեւանքով առաջացած շմոլ գազից: Հանգամանքները պարզվում են:

Ընտրությունից ընտրություն Հայաստան այցելող դիրիժորը

Լյուք Բաղդասարյանը իր գրադարանը հարստացրել է հայ կոմպոզիտորների երկերով

Հայաստանում է շվեյցարաբնակ ճանաչված դիրիժոր Լյուք Բաղդասարյանը: «Արամ Խաչատրյան» համերգասրահում ապրիլի 14-ին նա կղեկավարի Հայաստանի պետական Ֆիլհարմոնիկ նվագախումբը (ՀՊՖՆ):

Ստացվել է այնպես, որ նրա այցերը Հայաստան համընկնում են ԱԺ ընտրություններին: Իտալիայի, Ռումինիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի եւ այլ երկրների առաջատար նվագախմբերի ցանկալի հյուր մեր հայրենակցի հետ «Առավոտը» զրույցը սկսեց կատակելով՝ զուգադիպություն չի՞ տեսնում իր այցերի եւ Հայաստանի քաղաքական միջոցառումների միջեւ: Լյուք Բաղդասարյանն էլ ընդամենը ժպիտով ասաց, թե համոզված է, որ հայերը ամեն ինչում ճիշտ ընտրություն անել գիտեն, հետո էլ հավելեց. «Նախորդ այցիս ժամանակ համաշխարհային տնտեսական ճգնաժամ չկար: Իսկ եթե դա զգացվում է արեւմուտքում, դժվար չէ պատկերացնել, թե Հայաստանում ինչքան խորը կլինի այն...»: Ասվածը հաստատեց սեփական օրինակով. «Համերգների պակաս, ճիշտ է, չեմ զգում, սակայն վերջին երկու տարում, կոնկրետ՝ Իտալիա հյուրախաղերս 5-ից նվազել են 1-ի եւ այլն»:

Հինգ տարի առաջ մեզ հետ զրույցում դիրիժորը հայտնել էր, թե իր երկացանկը ընդգրկուն է՝ Բախից մինչեւ ժամանակակից կոմպոզիտորներ (առանց հայ հեղինակների) եւ, անկասկած, Կոմիտաս: Այս անգամ նույն հարցով մեր հետաքրքրությանը, մաեստրո Բաղդասարյանը դարձյալ չնշելով որեւէ հայ ժամանակակից կոմպոզիտորի անուն՝ հայտնեց. «Գրադարանս հարստացրել եմ մերօրյա հայ կոմպոզիտորների երկերով եւ խոստանում եմ ամենամոտ ապագայում Եվրոպայում հնչեցնել մերօրյա մեկ-երկու հայ կոմպոզիտորի ստեղծագործություն»:

Արվեստագետից հետաքրքրվեցինք՝ արեւմուտքում, իրենից բացի, հայազգի ո՞ր դիրիժորների անուններն են հաճախ հնչում: Մեր զրուցակիցը հայտնեց սփյուռքահայ Զորջ Փահլեւանյանի եւ Կոնստանտին Օրբելյան-կրտսերի անունները՝ հավելելով, թե հպարտանում է, երբ ՀՊՖՆ-ի գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյանի անունն էլ վերջին շրջանում հոլովվում է եվրոպական ԶԼՄ-ներում, փաստելով վերջին 5 տարիների ընթացքում հայաստանցի դիրիժորի ելույթները Հռոմում, Իսպանիայում, Ճապոնիայում, Չեխիայում՝ ինչպես արտերկրյա, այնպես էլ Հայաստանի Ֆիլհարմոնիկի հետ:

Հարցին՝ բազմազբաղ արվեստագետը երբեմն մտաբերո՞ւմ է 25 տարի առաջ՝ դիրիժորական կարիերայի սկզբում ո՞վ էր այն անհատը կամ գուցե իրավիճակը, որոնք դեր խաղացին իր՝ իբրեւ արվեստագետի կայացման համար, Լյուք Բաղդասարյանը նշեց Գրենխենի եւ Վիեննայի միջազգային մրցույթներին իր մասնակցության մասին (երկուսում էլ շահել է առաջին մրցանակ) եւ անվանի մանկավարժներ Կարլ Օստերայխերի եւ Էրվին Աշելի անունները, որոնցից ստացել է վարպետության դասեր: Առանձնահատուկ շեշտեց Ֆլորենցիայում եւ Միլանում հանդիպումը մեծանուն Կառլո Մարիա Զուլինիի հետ, ով, դիրիժորի խոսքերով՝ նույնիսկ «փակ» դռներ բացեց իր առջեւ:

Լյուք Բաղդասարյանի հետ մեր նախորդ հանդիպումից հետո փոփոխություն կա նրա անձնական կյանքում: «Մոտ ժամանակներս պատրաստվում եմ հետագա կյանքս կապել Ռոմանական Շվեյցարիայի նվագախմբի կոնցերտմայստերի՝ բելգիացի հմայիչ մի կնոջ հետ»,- ասաց դիրիժորը:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Մանկավարժականը զբաղված է ՀՀԿ քարոզչությամբ

Չնայած ՀՀԿ-ական նախարար Արմեն Աշոտյանը հրահանգել էր ռեկտորներին շքաղաքականացնել բուհերը, միեւնույն է՝ դրանց ուսխորհուրդները եղել եւ մնում են հիմնականում «ամենահարազատականացվածը»:

Դրա վառ ապացույցը երեկ Շարլ Ազնավուրի հրապարակում կազմակերպված միջոցառումն էր՝ ՀՀԿ քարոզարշավի շրջանակներում, որի գլխավոր դերակատարներն էին ՀՀԿ երիտասարդական կազմակերպությունը եւ Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) ուսխորհուրդը: Բուհի ուսանողները ոչ միայն ջերմեռանդորեն ելույթ էին ունենում բեմահարթակին, այլեւ ծածանում ՀՀԿ դրոշները:

Aravot.am-ը ՀՊՄՀ ուսխորհրդի նախագահ Վոլոդյա Գասպարյանից հետաքրքրվեց, մի՞թե բուհի ուսխորհուրդը կուսակցական բջիջ է, քաղաքական միավոր, որ ինչ-որ ուժի քարոզչությամբ զբաղվի, չէ՞ որ դա արգելված է օրենքով: «Բայց ո՞վ ասաց, որ մենք բուհի տարածքում քարոզչությամբ ենք զբաղվում, համ էլ մանկավարժական համալսարան չի գրված պաստառին, այլ ՀՊՄՀ ուսխորհուրդ»,- արդարացավ զրուցակիցս: Չէ՞ որ ուսխորհուրդը Հայաստանի պետական մանկավարժական համալսարանինն է եւ ոչ թե որեւէ կուսակցության մասնիկը: «Ուսանողական խորհուրդը ինքնակառավարվող մարմին է եւ իրավունք ունի մասնակցելու բազմաբնույթ միջոցառումների»,- փորձում էր շնահանջել Վոլոդյան: Նույնիսկ կուսակցական բնո՞ւյթի միջոցառումների՝ տեղի չէինք տալիս մենք: Ուսխորհրդի նախագահը ասաց, որ կարող են համագործակցել տարբեր ծրագրերի շուրջ, որոնք չեն հակասում ուսանողության շահերին:

Իսկ եթե, դիցուք, ՀԱԿ-ից լինի համագործակցության առաջարկ, ինչպե՞ս կվարվեն: «Նման առաջարկ չենք ստացել, որ լինի՝ քննարկման կդնենք»,- եզրափակեց Վոլոդյա Գասպարյանը:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

Արժանին մատուցենք Անրի Վերնոյին

Բաց նամակ Երեւանի քաղաքապետին

Ամեն ժողովուրդը հզոր է եւ անպարտելի ոչ միայն իր 20-ամյա պետությամբ եւ կերտած հաղթանակներով, այլեւ՝ աշխարհի տարբեր երկրներում ապրող եւ արարող իր հայրենակիցներով: Նրանց կողմից ստեղծվեցին հայի կնիքով համաշխարհային արժեքներ ներկայացնող ստեղծագործություններ տարբեր ոլորտներում (գրականություն, երաժշտություն, արվեստ, ճարտարապետություն, կինո եւ այլն): Նրանք բոլորն էլ, լինելով տարբեր երկրների ծնունդներ եւ իրենց մեջ կրելով տարբեր քաղաքակրթություններ, ունեն մեկ ընդհանրություն՝ նրանք բոլորը ծագումով հայ են, նրանց մեջ է հայի գենը, ուրեմն նաեւ նրանց ստեղծագործությունների մեջ է հայկականը:

Ա. Վերնոյը երբեք չի մոռացել իր հայկական ծագումը:

Այսպես, ուրեմն, Օսմանյան կայսրության Ռոդոստո քաղաքում ծնված՝ համաշխարհային եւ Ֆրանսիական կինոարվեստի մեծագույն ներկայացուցիչ, Ֆրանսահայ լեգենդար կինոռեժիսոր, սցենարիստ եւ պրոդյուսեր Անրի Վերնոյը (Աշոտ Մալաքյան) իր բեղմնավոր կյանքի 83 տարիների ընթացքում Ֆրանսիայում պարգեւատրվել է Պատվո լեգեոնի շքանշանով, երկու անգամ ստացել Ֆրանսիայի ազգային «Սեզար» կինոմրցանակը երկու անվանակարգերում՝ «Լավագույն Ֆիլմ» եւ «Լավագույն սցենար» (1980) եւ կինոյում ունեցած նվաճումների համար (1996): 1954թ. արժանացել է Լոկարնոյի փառատոնի Գլխավոր մրցանակին, իսկ 1956թ.՝ Ամերիկյան կինոակադեմիայի «Օսկար» մրցանակին՝ «Լավագույն ինքնատիպ սցենար» անվանակարգում:

Չնայած բազմազբաղ ու տքնաջան աշխատանքին, Անրի Վերնոյը միշտ էլ ժամանակ է գտել՝ շփվելու Ֆրանսիայի հայ համայնքի հետ, ոգեկոչել հայրենակիցներին, խրախուսել՝ հավատարիմ մնալ իրենց արմատներին: Մինչ կինոաշխարհ մուտք գործելը՝ լրագրությամբ զբաղվելու տարիներին, ուսումնասիրել եւ նյութեր է պատրաստել Հայոց ցեղասպանության մասին:

Առաջին անգամ Հայաստան է այցելել 1980թ. եւ ականատեսների վկայությամբ՝ մեծապես տպավորվել է իր ժողովրդի հետ ունեցած հանդիպումներից: Անրի Վերնոյը խոսել է հրաշալի հայերենով եւ մի առիթով այսպես է արտահայտվել. «Ես կարդում, գրում եմ հայերեն: Երբ հաջողվում է 2-3 օր իրար հետեւից խոսել մայրենի լեզվով, ապա իմ հայերենը դառնում է պարզ ու մաքուր: Հինգ տարեկանից մոմ եմ բռնել հայկական եկեղեցիներում: Իսկ եկեղեցին միայն հավատ չէ, այն նաեւ մշակույթ է: Երգել եմ մեր մեծ Կոմիտասի պատարագը: Եվ եթե ես հայ եկեղեցու զավակն եմ, նշանակում է՝ զավակն եմ նաեւ հայ մշակույթի»:

Մեծանուն հայի, աշխարհահռչակ կինոռեժիսորի աշխատանքի լավագույն գնահատականներից մեկը տվել է Ֆրանսիայի մշակույթի նախարար Ֆիլիպ Դոստ Բլադին. «Մեզանից շատերը համարյա ոչինչ չգիտեին 1915թ. Հայոց ցեղասպանության մասին: Վերնոյի «Մայրիկ» Ֆիլմը մեզ հնարավորություն տվեց հանդիպելու անցյալի ողբերգական իրադարձություններին»:

Անրի Վերնոյը, պատասխանելով կինոքննադատների եւ հանդիսատեսի հարցերին, նշել է. «Այս Ֆիլմն իմ ընտանիքի մասին է, իմ ժողովրդի, սա իմ պարտքն է մայրիկիս առջեւ: Գիտեք, ինչ է նշանակում հոգու պարտք: Հրաժարվել արմատներից՝ նշանակում է հրաժարվել ինքդ քեզնից»:

Հարգելի քաղաքապետ, այժմ եկել է հայ ժողովրդի եւ մեր պետության հոգու պարտքն անվանի կինոռեժիսորին մատուցելու ժամանակը:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու Արեւմտյան Եվրոպայի Հայրապետական Պատվիրակի Բենելյուքսի փոխանորդ Զատիկ վարդապետ Ավետիքյանի, բազմաթիվ սփյուռքահայերի, ինչպես նաեւ հարցով մտահոգ պատկան մարմինների կողմից հնչեցված առաջարկությունների շնորհիվ Անրի Վերնոյի անվամբ Երեւան քաղաքում որեւէ փողոց անվանակոչելու վերաբերյալ հարցը դրվել է Երեւանի ավագանու առողջապահության, սոցիալական պաշտպանության, արտաքին կապերի, ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի քննարկմանը, այնուհետեւ նշվել, որ կներկայացվի Երեւանի ավագանու քննարկմանը: Պարզ չէ, թե վերջնական ինչ որոշում է կայացվել:

Շուտով «Ոսկե ծիրան-2012» կինոփառատոնին մասնակցելու նպատակով Հայրենիք կժամանի արվեստագետի ընտանիքը՝ որդու՝ Պատրիկ Մալաքյանի գլխավորությամբ: Կինոթատրոնների ու հեռուստատեսության էկրաններից կրկին պիտի հնչի Անրի Վերնոյի անունը, անշուշտ կցուցադրվեն նրա Ֆիլմերը:

Հարգելի քաղաքապետ, առաջարկում եմ այդ այցի ժամանակ Երեւանի փողոցներից, պուրակներից կամ ճեմուղիներից մեկը անվանակոչել Անրի Վերնոյի անունով: Ինչպես ժամանակին Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակն է նշել. «Վերնոյը Ֆրանսիական կինոյի լեգենդի մի մասն է»:

«Մայրիկ» Ֆիլմով Անրի Վերնոյը նաեւ հայկական կինոյի լեգենդն է, ես կասեի՝ հայկական Ֆենոմենը վեր հանող լեգենդը: Ուրեմն մեծարենք եւ արժանին մատուցենք հայազգի կինոռեժիսորին եւ նրա ժառանգներին, ովքեր այսօր էլ շարունակում են իրենց լուման անմնացորդ ներդնել Ֆրանսիայի հայ համայնքի պահպանման, եւ ըստ արժանվույն ներկայացնելու դժվարին գործում:

ԷՎԵԼԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Ֆրանսահայ բարերարներ Արծրուն եւ Էլիզ Չերոպաշյանների թոռնուհի

VIVAcell MTS

ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

Հայ շախմատիստներն ամեն տեղ են

Այս օրերին հայաստանցի եւ հայազգի շախմատիստներն աշխարհի տարբեր ծայրերում մասնակցում են միջազգային մրցաշարերի, որոնց մի մասն արդեն ավարտվել է, մյուսները դեռ շարունակվում են կամ նոր են մեկնարկել:

Բրազիլիայում բնակվող Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը Ֆորտալեզա քաղաքում անցկացված բաց մրցաշարում յոթ հնարավորից վաստակելով 6,0 միավոր՝ գրավեց առաջին տեղը: Նա լրացուցիչ գործակիցներով գերազանցեց ղարագվայցի Կուբասին եւ բրազիլացի Դեբսին:

Հայաստանցի միջազգային վարպետ Անդրանիկ Մատիկոզյանը Լոս Անջելեսում եզրագիծը հատած 17-րդ Մետրոպոլիտեն մրցաշարում ինը հնարավորությունից կորցրել է 1,5 միավոր եւ ճանաչվել հաղթող: Այստեղ էլ նրան լրացուցիչ գործակիցներով զիջեց ռուսաստանցի Յանկովսկին:

Ֆիլադելֆիայում ղայքարն ավարտեցին միջազգային բաց մրցաշարի մասնակիցները: Գրոսմայստեր Վարուժան Հակոբյանը (լուսանկարում) ինը հնարավորից 6,5 միավորով բավարարվեց երկրորդ տեղով:

Լոյում մեկնարկել է շախմատի Ռուսաստանի տղամարդկանց թիմային առաջնությունը, որին մասնակցող թիմերում հանդես են գալիս 11 հայ շախմատիստներ: Մասնավորապես, Հայաստանի ազգային հավաքականի անդամ Սերգեյ Մովսիսյանը «Սանկտ Պետերբուրգի» առաջատարներից է, իսկ Դեսնոգրադի «Ատոմ» թիմի վեց անդամներից հինգը՝ Պողոս Նահապետյանը, Բենիամին Գալստյանը, Վարդգես Թովմասյանը. Սարգիս Մանուկյանը եւ Գեորգի Պողոսյանը մեր հայրենակիցներն են:

Գրոսմայստեր Վիգեն Միրումյանը, որ հանդես է գալիս Չեխիայի դրոշի ներքո, Գերմանիայի Նորդերշտադտ քաղաքում ավարտված օփենում հանգրվանել է իններորդ հորիզոնականում: Նա ինը հնարավորությունից իր անվան առջեւ գրանցել է 6,5 միավոր:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Նոր նախագիծ՝ «Տեսակրոպակ»

«ՎիվաՍել-ՄՏՍ»-ը մեկնարկում է «Տեսակրոպակ» նախագիծը: Նախագծի նպատակն է նպաստել Հայաստանի պատմական հուշարձանների ճանաչմանն ամբողջ աշխարհում: Առաջին սարքը տեղադրվել է Էջմիածնում՝ Սուրբ Գայանե եկեղեցու հարեւանությամբ: Այն հնարավորություն է ընձեռում բոլոր ցանկացողներին, վճարելով ընդամենը 500 դրամ, տեսագրելու 1 րոպե տեւողությամբ տեսանյութ եւ ուղարկելու այն ցանկացած էլեկտրոնային հասցեով: Սարքը տեղադրված է այնպես, որ ձայնագրելիս հետին պլանում երեւում է եկեղեցին: Յուրաքանչյուր նամակում կա հղում, որը պարունակում է տեղեկատվություն տվյալ պատմամշակութային հուշարձանի մասին, եւ հասցեատերը հնարավորություն է ստանում տեսնելու ոչ միայն իրեն ուղարկված ողջույնը, այլեւ ծանոթանալու տվյալ հուշարձանի պատմությանը: Սարքը նաեւ հնարավորություն է տրամադրում հաղորդագրությունն ուղարկել անգլերեն, հայերեն կամ ռուսերեն:

«ՎիվաՍել-ՄՏՍ»-ի կողմից առաջարկվող ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ տեսակրոպակը տեսահաղորդագրությունների միջոցով հուզիչ պահերն անմիջապես նկարահանելու եւ ուրիշների հետ օնլայն ռեժիմում կիսելու ամենադյուրին տարբերակն է: Այն զգալիորեն կրճատում է այդ պահերը նկարահանելու եւ հեռու գտնվող ընկերների եւ ընտանիքի անդամների հետ կիսելու ժամանակը: Պատմական, կրոնական եւ մշակութային հուշարձանների եւ վայրերի մասին տեղեկություններ ստանալու այս հարմարավետ լուծումն օգնում է այցելուների մոտ ձեւավորել ամուր զգացմունքային կապ պատմական վայրերի հետ»,- նշեց «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը: Առաջիկա երկու ամիսների ընթացքում նախատեսվում է նմանատիպ եւս ութ սարք տեղադրել Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող տարբեր պատմամշակութային հուշարձանների հարեւանությամբ: Պատմամշակութային հուշարձանների վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը տրամադրվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից:

Իսպանական ակումբները կրոնափոխվում են հոգուտ իսլամի՞

Մադրիդի «Ռեալը» որոշել է հանել ակումբի խորհրդանշանի վրայի խաչը, որը գոյություն ուներ 1920 թվականից, երբ Իսպանիայի թագավոր Ալֆոնսո 13-րդը ակումբին տվեց իր բարձր հովանավորությունը:

Ակումբի ղեկավարությունը հայտարարել է, թե դա արվել է Եվրոպայի եւ Մերձավոր Արեւելքի մուսուլմանների շրջանում իրենց հեղինակությունը բարձրացնելու նպատակով: Խաչը հանելու շուրջ բանակցություններն սկսվել են մարտին, երբ ԱՄԷ-ի Ռաս-էլ-Հայմում դրվեց Real Madrid Island Resort տուրիստական կենտրոնի հիմքը: Պայմանագրի համաձայն, որը ստորագրել են Real Madrid-ի ղեկավարությունը եւ Էմիրությունների ղեկավար շեյխ Սաուդ բին Սաքրը, իսպանական ակումբը պարտավորվել է հանել իր խորհրդանշանի խաչը:

NEWSru.Israel-ը տեղեկացնում է, որ որոշ ժամանակ առաջ «Բարսելոնան» նույնպես զրկվել է խաչից՝ հոգուտ Քաթարում գտնվող հովանավոր հիմնադրամի:

Ա. Հ.

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Մի՛ մասնակցեք «ձվերի հեղափոխությանը»

Խորհուրդ է տալիս մասնագետը

Ներկած ձուն ոչ միայն զարդարում է տոնական սեղանը, այն նաեւ ընդունված է նվիրել միմյանց Զատիկի ողջ շաբաթվա ընթացքում: Ձուն դեռ վաղ անցյալից հանդիսանում է նոր կյանքի խորհրդանիշ: Շատ ձու ուտելը վնասակար է առողջությանը՝ հաղորդում է doctors.am-ը: Բժիշկները հայտնաբերել են, որ չափից շատ ձու ուտելը կարող է հանգեցնել երկրորդ տիպի շաքարախտի ձեւավորման: Այս եզրակացությունները հիմնված են 25-ամյա հետազոտության վրա, որին մասնակցում էր 20 հազար կին ու 36 հազար տղամարդ: Մինչ այդ շաքարախտի ու ձվի միջեւ կապը բացահայտված չէր: Գիտական ուսումնասիրության ընթացքում 1921 տղամարդկանց ու 2112 կանանց մոտ գրանցվել է շաքարախտ: Առօրյա սննդակարգում չափից շատ ձվի առկայությունը բարձրացնում է խոլեստերինի ու գլյուկոզայի մակարդակը. այս փաստը հաստատում է նաեւ դիետոլոգ Կարինե Պետրոսյանը:

Ըստ բժիշկների՝ ամենամեծ ռիսկայնության գոտում են նրանք, ովքեր ամեն օր են ձու ուտում: Չնայած նրան, որ ձուն պարունակում է շատ օգտակար նյութեր, չարաշահելու դեպքում այն նվազեցնում է «լավ» խոլեստերինը: Ընդ որում՝ «վատ» խոլեստերինն ընդհակառակն աճում է՝ ոչնչացնելով ձվի բոլոր դրական հատկությունները: Վերլուծելով ստացված տվյալները՝ բժիշկները խորհուրդ են տալիս սահմանափակել ձվի օգտագործումը՝ շաբաթական 2-3 անգամ:

Դիետոլոգ Կարինե Պետրոսյանի ձեւակերպմամբ՝ ընդունված կարգի համաձայն՝ հայ ընտանիքները Զատկի տոնին 50-60 ձու են ներկում՝ առաջնորդվելով «շատ լինի, քիչ չլինի» սկզբունքով. «Ձուն սկսում են ներկել Զատկի տոնից մեկ օր առաջ, կեսն իրենց ուտելու, կեսն էլ նվիրելու համար: 4-5 հոգուց բաղկացած ընտանիքը մեկ-երկու օրվա ընթացքում 30-ից ավելի ձու է սպառում, չհաշված այն, որ մի շարք ուտեստների բաղադրության մեջ եւս ձու է պարունակվում: Ու բացի տանն ունեցած ձվերից, մարդիկ նաեւ Զատկի տոնին նվեր են ստանում: Եվ որպեսզի ծախսած գումարը ջուրը չգցեն՝ պիտի ներկած ձվերը ուտեն: Ստացվում է՝ մեր օրգանիզմներում ձվերի հեղափոխություն է տեղի ունենում: Էլ չեմ խոսում երեխաների մասին, որոնք ոչ միայն խաղում են ներկած ձվերով, այլեւ ամեն կոտրելուց հետո պարտադիր պայման են համարում այն ուտելը: Շատ ծնողներ անուշադրության են մատնում այս փաստը, համարելով, որ եթե այդ օրը կամ Զատկի հաջորդ օրը երեխան իրեն վատ չի զգացել, ուրեմն մեկ օրվա ընթացքում նրա կերած անհաշիվ ձվերն էլ չեն վնասելու փոքրիկի առողջությանը»,- ասում է Կ. Պետրոսյանը՝ զգուշացնելով չշարաշահել ձվի օգտագործումը:

Դիետոլոգի փոխանցմամբ՝ եփած ձուն մեկ օր հետո ուտելու համար արդեն պիտանի չէ, իսկ ներկածը՝ առավել եւս. «Որպեսզի ոչ ծախսած գումարը ջուրը գցեք, ոչ էլ առողջությունը վտանգեք, Զատկի տոնին բավարարվեք 10-15 ձու ներկելով: Ժողովուրդ, աշխարհի վերջը չէ: Մեր հասարակությունը խոսում է բարձր արժեքներից, բայց թերանում է տարրական շատ այլ հարցերում: Ինչպես Նոր տարուն, այնպես էլ Զատիկին ու շատ այլ տոների, ընտանեկան միջոցառումների պատրաստվելիս շեշտը դրվում է ուտելիքի ու անպայման շա՜տ ուտելիքի վրա: Բայց թեթեւ ապրելու համար հարկավոր է չափավոր սնվել, անկախ այն բանից՝ տոն է, թե սովորական օր»:

Ե. Հ.